ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

ք. Գավառ , Կենտրոնական հրապարակ 7
Հեռ. /0264/2-34-31
Ֆաքս /0264/2-34-31
Էլ. փոստ gegharkunik@mta.gov.am

N 02/12/455
13 02 ----------2015թ.

Ք. ԵՐԵՎԱՆ, ԲՈՒԶԱՆԴԻ 1/3, ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ
ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՊԱՐՈՆ ԳԵՎՈՐԳ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Հայրապետյան

Ի պատասխան Ձեր 27.01.2015թ. N 238-Ի 4 գրության հարցադրումների՝ հայտնվում է, որ համաձայն ,,Քաղաքացիական ծառայության մասին,, ՀՀ օրենքի պահանջների, ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի տեղեկատվական քաղաքականությունն իրականացնում է մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժինը:

Այն իրականցվում է մարզպետարանի ինտերնետային կայքէջի (gegharkunik.gov.am) միջոցով: Սույն գործունեության համար պատասխանատվությունը կրում է մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի վարիչը՝ քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրով իրեն վերապահված լիազորությունների սահմաններում:

Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի վարիչի տվյալները տեղադրված են (gegharkunik.gov.am) կայքէջի ,,Մարզպետարան,, բաժնի ,,Կառուցվածք,, ենթաբաժնում:

ՀՀ Գեղարքունիքի մազպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժինն ունի մարզպետի կողմից հաստատված կանոնադրություն և բաժնի վարիչի կողմից պետական մարմնի տեղեկատվական քաղաքականությունն իրականացվում է առաջնորդվելով տվյալ կանոնադրությամբ և ,,ՀՀ քաղաքացիական ծառայության մասին օրենքի,, պահանջներից բխող իր պաշտոնի անձնագրով:

Բաժնի վարիչի քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրից բխող լիազորությունները և գործառույթները տեղադրված են (gegharkunik.gov.am) կայքէջի ,, Մարզպետարան ,, բաժնի ,,Կառուցվածք,, ենթաբաժնում:

Ս. ԽԼՂԱԹՅԱՆ

Իրավաբանական բաժին
Ն. Ղազարյան